Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՑՈՑ 23 ՏՐԻ 4383 — Հ. Տ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1891 ԹԻՒ 2

ԴԱՆՈՒԲ

LE DANUBE

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան բաժանորդագինն է 8 ֆր. եւ կամ 3 ռուբլի թղթադրամ. կանխիկ վճարելի։

Ուրիշ ամեն տեղի համար տարեկան բաժանորդագինն է 12 ֆր. եւ կամ 5 ռուբլի թղթադրամ, կանխիկ վճարելի։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆրանսերէն լեզուով։

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է որկեր հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal - TANOUP -
(BULGARIE) ROUSTCHOUK

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՍՈՒ ՊՈՒԼԿԱՐԱՐՆԱԿ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

—

«ԴԱՆՈՒԲ»ի առաջին թերթով անիշխանականութեան վերայ գրուած յօդուածի մէջ ազգին արդի պահանջմանց նկատմամբ մեր յայտնած գաղարարներն Հայ երիտասարդաց մէջ զանազան քննադատութեանց առիթ տուած են. ասոնց իրաւացի կամ անիրաւ լինելը մեզ համար կարեւորութենէ զուրկ է, զի մենք բնաւ նպատակ չունինք ակնկալութեանց փափաքով սերաշահել կամ կեղծաւորել մեր ընթերցողներն և մեր ուղղութիւնն է անկեղծօրէն յայտնել մեր տեսութիւններն յօդուտ մեր Պուլկարաբնակ և Ռումանաբնակ ազգայնոց և անխտիր հարուածել ամեն թերութիւններն որոց վրայ եղած եմք երկար տարիներ ապրելով Պուլկարիոյ զանազան քաղաքաց մէջ. քաջ գիտեմք որ մեր հարուածներ դառն պիտի թուին շատ անհատներու, այլ ապահով եմք որ լաւ արդեանց դուռ պիտի բանան։

Մեր նախորդ յօդուածով «ներքին բարենորոգման» հարցը շեշտեցինք, մեր արածը մի նոր յայտնութիւն չէր և շատերու զգալի եղած էր մի օրգան կը պակասէր այդ հարցի ուսումնասիրութեան համար, ուրախ եմք այսօր որ «ԴԱՆՈՒԲ»ի հրատարակումը մեր այդ պակասը լրացուցած է. «ԴԱՆՈՒԲ» մի լաւ ապարէզ է այն զգայուն ազգայնոց, որք այդ հարցի կարեւորութիւնը զգացել են, ամեն ոք հարկ դատած տեսութիւններն կրնայ պարզել նրա հիւրընկալ էջերու մէջ։

*
* *

Մեր յուզած հարցը շատ բազմակողմանի է, այնպէս որ շուարած եմք այս վայրկենիս ուրկէ սկսելիս, թող մեր ընթերցողք ներեն, որ այսօր զբաղուինք միայն Պուլկարաբնակ Հայ երիտասարդութեան անհեալ և անպատուաբեր վիճակովն. Հայ երիտասարդաց մեծագոյն մասը թերեւս պիտի վշտանայ և մեր տեսութիւններն կարդալէ յետոյ պատռելով խեղճ «ԴԱՆՈՒԲ»ը մէկ կողմ պիտի նետէ, նման այն հիւանդին որ զինքը դարմանող մօր մը ձեռքը գբանուած դեղը մէկ հարուածով սենեկին մէջտեղը կը նետէ վասնզի դեղը թէպետ օգտակար այլ դառն ըլլալու համբաւն ու բնութիւնն ունի, և այդ հիւանդը որչափ ալ իր առողջութեան ատեն հանդարտաբարոյ կազմուած քիւրտ էր էր, այնչափ ալ դիւրաբարբրոք եղած է իր հիւանդութեան անկողնոյն մէջ և կարծես մօրը նազ կընէ. այլ այդ հաստատամիտ մայրը չի վշտանար, չի յուսահատիր նորէն կը պարարատէ իր դեղը

ու մայրական գորովով երբեմն ալ սպառնալեօք կը խմցնէ զայն իր որդւոյն, ոգևորեալ հոգւոյն հատորը լաւացնելու յոյսով. նոյնպէս ալ մենք խօսելով Պուլկարաբնակ Հայ երիտասարդութեան վերայ այդ հարկին տակ կը գտնուիմք, հոգ չէ թերևս մեք ալ պիտի նախատուիմք, այլ մի օր պիտի գայ որ մեր տեսութիւններն և կծու ակնարկութիւններն պիտի գնահատուին, մեք այսօր ոչ թէ այդ պատրաստի նախատինքներէն երկնչելով ծածկանուան տակ կը գրեմք, այլ ապագային մեր ըստանալիք փառքէն այժմէն խոյս տալու համար։

Մէկ կողմ դնելով բացառութիւն համարուած մի փոքրաթիւ մաս, որ հաղորդէ մեր զգացմանց, քննենք Հայ երիտասարդութիւնը. Ռուսճուքի, Շումնուի, Վարնայի, Տոպրիչի մի քիչ ամեն տեղի (un peu de partout) կը գտնեմք նրանց կեանքի պատկերը խիստ տխուր. անկեալ. և անպատուաբեր. մի մասը զոհ և խաղալիք է քաջէ շանթանի. մի մեծ մասը գերի է թղթախաղի և օղիի. մի մաս շահակցական դրութեամբ սիրային արշաւանաց մոլի. մի մաս բոլորովին անտարբեր իր շուրջը անցած դարձածին, անզգայ դարուս պանանջմանց, աննպատակ մի կեանքի մէջ երերուն, այս կորստատար հոսանքին բռնուած մեր խեղճ Հայ երիտասարդութիւնը ասկէ տասը տարի յետոյ երբ մի յետադարձ ակնարկ նետէ իր ներկայ անկերպարան «նչ»-ին վերայ, ողբ ու կոծ պիտի ըլլայ իր բաժինը. ուստի երիտասարդութիւնը թող սթափի և խորհի իր ներկայ ընթացքին վերայ որ 10 տարի յետոյ գալիք երիտասարդութեան օրինակ պիտի լինի. և այժմէն թող խորհի այն ծանր պատասխանատուութեան վերայ զոր իր խիղճը ապագային երմէ պիտի պահանջէ. Հայ երիտասարդք թերևս պիտի զայրանան և հարցնեն թէ ինչ իրաւունք ունիմք այսչափ ծանրանալու և իր վիճակը այդչափ տխուր պատկերացնելու, մեր պատասխանը շատ դիւրին է և հաստատուած իրական փաստերու վերայ. սիրելի երիտասարդութիւն, երբ վերոյիշեալ քաղաքներէն արևը իր օրական հրաժեշտը կուտայ, մեր խօսքերէն ամենէն աւելի զգածուողն ու վշտացողն թող մեր բաղուկը ընդունելու շնորհքն ընէ, և մեք յոժարակամ առաջնորդեմք զինքը այն վայրերը ուր Հայ երիտասարդութիւնը կը դիմէ իր խանութը կամ գործատեղին թողելէ յետոյ. մեր պտոյտի յատակագծին մէջ առաջին անգամ պէտք է դիմենք ծխավաճառի մը խանութ, դրան մէկ կողմը դուք նրա-տեսէք մէկ կողմը մենք, առաջին եկող մի զոյգ երիտասարդներն կը տեսնէ՞ք Եւրոպական տարազով հագուած, Պուլանժէի մօրուքով, պ-ղեղ-ը-ի քալուածքով, և Անիի սերունդներու. . . յատուկ ձեռքի և գլխի շարժուածքներով, հազիւ երբեմն իրենց ճամբուն վրայ հանդիպող ծանօթի կը բարևեն, ասոնք Հայ են մի՛ զարմանաք երբ տաճկերէն կը խօսին. երբ մօտենան խօսակցութիւնին կը դադրեցնեն. կրկնակ «բարկուն» (բարի երեկոյ) կը լսուին իրենց բերնէն. ասոնք Արիսթօքրատեան են։ Ահաւասիկ ուրիշ 3 հոգի ալ. ասոնք իրենց շարժուածքներովն գուշակել կուտան, որ էսնաֆ դասակարգի զաւակներ են. իրենց խօսակցութեան մէջ շատ տաքցած են. հայերէն տաճկերէն բառեր խառն և գահավէժ մի եղբով դուրս կը ժայթքեն իրենց բերնէն. մեզ տեսան նորէն լռեցին, 3 «բարկուն»ներ լսելու պատրաստուեցէք ասոնք ալ առին ծխախոտին և մեկնեցան։ Ահա ձեզի մի աւելի ստուար խումբ, եթէ ոգելից ըմպելեաց կիրառութեան արդեանց վրայ գաղաբար ունիք կրնաք միծ ուսումնասիրութիւններ ընել ասոնց դէմքերուն վերայ. իրենց բալթօի աչ գրպանը մի քիչ ուռած է և գիտէք ինչո՞ւ. 5-6 ժամէ 'ի վեր երազածնին կենաց ջուրի ռէնն է, զորս առաւօտուն խնամքով իրենց գրպաններն դրած են և իբր գանձ երբեմն ձեռքի փափուկ շօշափմամբ կը ստուգեն գողցուած չըլլալը, ասոնք ալ մեկնեցան. ուրիշ խումբ մ'ալ կը հանդի, ամենուն ալ ձեռքը կայ. «Արմենիա». «Հնչակ». «Հայրենիք». և այլն. այս երևոյթը թող զՁեզ չուրախացնէ, աննպատակ և կեղծ ցուցամոլութիւն է իրենց սոյն ընթացքը, կը կարդան զայնս կամ առանցհասկնալու և կամ խաբուելու համար. դրանց մէջ գրուած սրատաճմլիկ լուրերը կարդալով կը զգածուին այլ իրենց սոյն զգացումը վայրկենական է, սնահման մի հետաքրքրութենէ մղեալ իրարու ձեռքէ կը յափշտակեն այդ թերթերը բայց 1|2 ժամ յետոյ մոռցած են իրենց կարդացածը, վանդի այդ դատարկ գլուխներն իրենց կարդացածը իբր թշուառութեան նորավէպ կը նկատեն չեն խորհիր բնաւ իրենց ներքին բարեկարգութեան վրայ։ Ահա մի ուրիշ խումբ ալ ամենէն բազմաթիւ կը տեսնէք Եւրոպական տարազ կը կրեն այլ կարմիր գօտին չեն թողած դեռ. իրենց խօսակցութիւնը հայհոյալից բառախաղեր են. ոմանք անիմաստ և ոմանք շատ ուշիմ. ընդհանրապէս կծու ակնարկութիւններ են իրենցմէ յառաջ անցնող միւս խմբակներու նկատմամբ. ասոնք արուեստաւոր են կամ ստոր դոր-

ծերով պարապող, ամեն բան կանխիկ կը գնեն գինետուն մտած ատենին օղին գինը վրայ կը դնէ, այլ համոզուեցէք որ ամենէն անվնասներն են. իրենց թերութեանց պատասխանատուութիւնը իրենցմէ յառաջ անցնող խմբակներու վրայ կը ծանրանայ։

Ահա մի ուրիշ խումբ ալ, ամենքն ալ Պոլսեցի են. տաճկերէն կը խօսին. չեն զիջանիր մտնել տեղացւոց ընկերութեանց մէջ. իրենց խօսակցութեանց նիւթն է տեղացւոց թերութիւնները ուտեստի նըկատմամբ, ամեն ատեն կը քննադատեն որ տեղացիք հնդկահաւը կաղամբով կ'եփեն ասով մեղք գործած կ'ըլլան իբր թէ. իրենց հաւատքն է Պոլսոյ հմայիչ զբօսավայրերը «Հիւնքեար սույու». «Բէհաթհանէ». «Զամլըճա» և այլն։ Իրենց խոէալն է Թադէոսի. Ճիսանի. Աղապէյի ինճէսազի խումբերն և գիշեր ցերեկ չեն դադրիր նրանց երգերն մռմռալ և ախ քաշել յիշելով «լիմոն-խակէլէսի»ն «ֆէնէրի գաղինօ»ն կամ «լանկայի Եանի»ն։

Ահա մի ուրիշ Պոլսեցւոց խումբ ևս, ատենք տեղացւոց բարև տալ անգամ չեն յօժարիր, որովհետև Պոլսոյ լուսաւորեալ դասին կը պատկանին, իրենց անծանօթ Ֆրանսերէն լեզուն լաւ գիտեն. ձեռքերնին Ֆրանսերէն թերթ. գրպանին Հայ լրագիր. ատենց խոէալն է Ֆրանս. ռոմաններ. Պոլսոյ երեսփոխանական ժողովը. Միացեալ ընկերութիւնը (թէպետ մէկ կուտ ատած չ'ունին) սիրահարական ոտանաւորներ, նորավէպեր, զէվզէկաբանութիւններ և այլն. ատենք այն ատեն տեղացւոյ բարև տալ կը յօժարին և նրանց գինետուններն այցելել կըսկսին երբ Հոգաբարձու կամ Թաղական կընարուին, խաբելու համար խեղճ տեղացիներն որ Եկեղեցին և դպրոցը լաւ վիճակի պիտի հասցնեն։

Էհ սիրելի բարեկամ. ահա ատենք են մեր երիտասարդութիւնը կազմող տարրերը, ելէք երթանք Հայ թաղերու գինետուններն, տեսնեմք ինչ վիճակ ունին այդ վայրերու մէջ մեր Հայ անկեալ եղբայրներն. ահաւասիկ սա ամենէն ստուարաթիւ յաճախորդ ունեցող գինետունն է. 2 ժամ միջոց պիտի ունենամք մեր յետազօտութիւններն ընելու. ամեն դասակարգ իր խմբովը մէկ մէկ սեղան ընտրած է. ամեն անհատի յատուկ մէկ մէկ շիշ կամ 50 տրամնոց օղի կամ 100 տրամնոց գինի կայ, ինչպէս որ գիտէք Դէն խմողէն է. գինեպանը իր ընդլեհին մէջ մեծ գործունէութեան վերայ է. ըստ սովորութեան բարկացած կերևի միշտ 50 տրամ օղի ուզուելուն, մանաւանդ այն յաճախորդաց նկատմամբ որք մի քանի 50 տրամնոց խըմելու կարող ունին և իրենց գործին ամբողջութիւնը մէկ հատորով չեն 'ի լոյս ընծայեր ու 50 տրամնոց հատորներու կը վերածեն գինեպանին պարապ մի աշխատութիւն պատճառելով. գինեպանք մեծ վարձատրութիւն խոստացած են այն հնարագիտին որ այսպիսի մի գիւտ ընելու կը նուիրէ իր անձը։ Սիրելի բարեկամս, գիտեցէք ամենուն ձեռքը գտնուած ճարպալից և գորշագոյն առարկաներն, որք զաղիր բուրումներ կը սփռեն իրենց շուրջը խաղի թուղթ են, և երկար ատենէ 'ի վեր կը չարչարուին ա՜մ՜ռէ՜ռներու ձեռաց տակ. իրենց նախնական գոյները կորսուած են, կազմութիւնին թղթէ է, թէպետ կեղտոտ կաշիի երևոյթ ունին. ականջ տուէք բրէֆ՞ի պարբերի և սէ՜ռէ՜ռի սիրահարաց վէճերուն, բարկութիւններուն և քրքիջներուն. գարշահոտութիւնը ամեն տեղ կը տիրէ. սիկառի ծուխ. եփած ապուխտի հոտ. ոգիի բուրում. թթուածինի հրատարակութիւն (ամեն հեղինակ իր գործին կը հանի) վառարանի մուխ (եթէ ձըմեռ է) այս ամենը իբր առողջաբանական հանգամանք նկատուած են մեր անկեալ երիտասարդութեան կողմանէ մեր ընելիք քննական պտոյտը կատարեալ ըլլալու համար այս երեկոյ չի պիտի համակերպիք Ձեր նմանեաց այլ պիտի բաւականանաք ինձ հետ մէկ երկու գաւաթ օղի խմելով. ես քաջ գիտեմ որ թէ գինեպանը պիտի զարմանայ և թէ մեր մերձակայ սեղաններէն մի քանի Հայեր պիտի ծաղրեն զմեզ. հոգ չէ մենք մեր նպատակին ծառայենք, սա մեղուի նման սեղանէ սեղան վազուզող պատանին գինեպանի աշակերտն է, վերջին աստիճանի կոշտ ու անբաղաքավար է, յանձնանքը իրենը չէ գիտող ու ուղղող չէ եղած. ցերեկները դպրոց կերթայ գեշերները հոս կը ծառայէ. իսկ միւս երիտասարդը որ ամեն սեղան կ'այցելէ, օղին ու գինին փոխն 'ի փոխը աղդասիրաբար կը խմէ (յատուկ մանանաճիւղ չ'ունի) գրպանը խ՜ռ՜էի մի տուփ կայ մեծ զմռռով կընքուած. գիտէ՞ք ով է, ազգային ազատութեան մեծ գործին զոհուած անձնուէր և գրպանաշորդ աղդասիրայ կամ սիրին պրօպագանդիստը, դուրսէն ձեռք ձգածը ներսէն դանձածը իրենն է. անձնուիրաբար կ'աշխատի. ազդասիրաբար կուտէ կը խմէ. օրէնքի տակ կամ խ՜ռ՜էի տուփով հաւաքած դրամին 0|0ին 25ը իրեն և իր ընկերայն է. հաշիւ չ'ուզուիր իրենցմէ վասնզի, չ'ունեցած նպատակին գաղտնի է (եթէ ուզուի ալ տուողն ո՞վ է) ատենք

նիստեր կ'ընեն դռնփակ այլ վրան բաց (Պարոն-եան անդիի աշխարհ ականջդ խօսի) միտքդ պահէ այդ երիտասարդը նորէն իրեն պիտի հանդիպինք. քիչ մ'ալ դուրս ելլենք ու մի ուրիշ գինետուն այցելենք կամ թէ կ'ուզէք շուտ երթանք ճաշենք, տունս մօտ է, ճաշս պարզ շուտ կը լինայ դեռ մինչև առանց Բագոսի տաճարին տալիք հրաժեշտի ժամը բաւական միջոց ունիմք։

ԽԱՂԱՂԱՍԷՐՆ

(Կը շարունակուի)

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(Շարունակութիւն Ա. Ամսոյ Ի Էջէ)

— Ասորոց Մար Շիմոնը (Հայր Սիմէօն) ապրելով իւր ժողովրդի անցուկ ծոցում։ այսօր իւր սահմանափակ խելքովն և գործունէութեամբն աւելի գործ է գործում ի նպաստ իւր ժողովրդեան քան մեր բարձրաստիճան հովիւներն. որոնք միշտ անպատկառ բղաւում են «մենք ձեր առաջնորդներն ենք։

Թերևս մի կարգ անձինքներ ալ ելլեն ասեն թէ Սիս և Վան Մկրտիչ և Խաչատուր Կաթողիկոսներ ունինք, նոքա ինչ կ'անեն որ ուրիշ մ'ալ աւելացնենք ինչ պիտի անէ։

— Ազգը համօրէն արդէն դրանց Կաթողիկոսութիւնները բաւական լսում է. ոչ թէ գործնական տեսնում է. և իրենք ալ վանահայրութենէ անդին ո՛չ գործ ունին և ո՛չ ազդեցութիւն. ինչպէս որ վերջերս աւելի լաւ փորձեր ունեցանք դրանց նկատմամբ. որով այդ փոքրոգի և ոսնած Կաթողիկոսութիւնները չեղեալ կը նկատուին և արդէն աւելի կարծելն մեղանչելէ. արդ, միահամուռ որոշմամբ ընտրել ամբողջ Հայութեան համար մի արժանաւոր Կաթողիկոս 'ի Ցաճկահայաստան աւելի գովելի և ազգաշահ գործ է քան յԷջմիածին, և Էջմիածինն ալ երուսաղէմայ նման մի հովուապետով կառավարել. մանաւանդ թէ Ռուսահայերն ունին այնքան զարգացում որ կարօտ չեն Էջմիածնայ անուանական Կաթողիկոսութենէն սպասել մտքի պաշար և կեանքի ընչքի ապահովութիւն։

Ռուսահայերը եթէ ըմբռնեն ճշմարտութիւնը շուտ կը համոզուին, ո՛չ թէ Ցաճկահայոց նման մի ճշմարտութիւն ըմբռնելու համար յամառիր. որով գործը կախում կ'ունենայ Ցաճկահայոց և Ռուսահայոց մէջ կատարուելիք համաձայնութենէն։ Մեզ գաղթական Հայոցս կը մնայ միայն կարծիքներ ներշնչել. և եթէ երբէք ձեռնհասութիւն ալ ունեցանք մասնակցինք։ եթէ մեր այժմեան ըսածներն արձագանք գտնեն. և Էջմիածինն ալ մի լաւ հայրապետի կամ աշխարհական վանապետի ձեռքն անցնի, աւելի լաւ պիտի տեսուի քան զարդիս։

* * *

«Խորչեցէք կղերի փիլոնէն, որ դիակի պատանք, դագաղի ծածկոց եւ ոճիրներ քօղարկող վարագոյր մ'է։» — «Պետրոս Դուրեան։»

Այս օրերս մի քանի լրագրեր Նորընտիր Կաթողիկոսութեան համար այժմէն քանդէքսոր ընել կը ջանան Խրիմեան Հայրիկը. այս ընտրութեան առթիւ մեր ծիծաղները կը բռնենք. և միայն կը հարցնենք այդ տիրացուներին. թէ Խրիմեան Հայրիկը կը ճանչնա՞ք և նրա անցեալն պատմութիւնը մօտէն ծանօ՞թ է ձեզ. մենք այն համոզումը ունինք թէ՝ Հայրիկի մէջ գործնական ոգին բոլորովին մեռած է. նա այժմ շարժելու անկարող ալևոր ծերունի մ'է. այսպիսի ծերուկի մը ելլել ընդհանուր ազգին ղեկը յանձնել կարծեմ խելացութիւն չէ. նախապէս դա ուրիշ բան չէ նշանակում, եթէ ո՛չ ասել. Խրիմեան գնա՛ Էջմիածին պառկիր։ Երկրորդ մի մարդ որ մտքի թարմութեանը և չափահասութեանը ժամանակ ազգօգուտ գործի հեղինակութիւն չէ ունեցել, իւր ծերութեանը պիտ՞ի ունենայ (.՞.՞.) առա՞ղ մտացս կուրութեան։

Մեր նպատակից դուրս է անհատականութեանց վրայ խօսելն, որովհետև մեք ո՛չ ոքի հետ յարաբերական և շահակցական կնճռոտից հաշիւներ և մաղտից կրքեր չունենք. այլ միայն Հայ ժողովրդեան հասկացնել և իմացնել թէ՝ որ հոգեւորականին որ շատ գովում են, մեծացնում են, հաւատացէք որ դրա յետին վատութեանց անհուն ովկեան մը կայ սև փիրնով ծածկուած, նման ԻՍԻՍԻ վարագոյրի. եթէ վեր առնենք այդ վարագոյրը պիտի սոսկանք. բայց հարկը մեզ ստիպում է մաս մը վեր առնել ընթերցողաց դոհացնելու համար։

1860ի թուականներին Կ.Պոլսոյ էնսէլիկէնդ գաւակարգը հրատապ եղանակաւ Սահմանադրութեան հարցով զբաղվում էր, և իւր նպատակի յաջողութեան համար միջոցների կը դիմէր. ուստի գաւառացւոց մէջ պրոպականտիստ մը կը հարկաւորէր, ով՞ կար աւելի յարմար քան զԽրիմեան Հայ-

րեկ. որ Պոլիս եկած էր Վանայ առաջնորդական խնդիրներու առթիւ. այդ ժամանակի էնտէլիգենտը իրեն նպատակը ժողովրդականացնելու համար. Ապուչեխցի Անտօն Արապեանի փտտած տպարանը, և նոյն ժամանակուայ տպարանների դարակներում դեղնած և անվաճառելի գրքերից ալ մի քանի հարիւր օրինակներ, Հայրիկի անուաթին տակ դնելով, ձեռքն ալ մի արտօնագիր որ երթայ 'ի Վարագ տպարան և դպրոց հաստատէ, և ո՛չ ոք իրեն գործերի չը միջամտէ: "Արծիւ Վասպուրականը" սկսաւ հրատարակուիլ բայց միշտ թերագրութեամբ որ Սահմանադրութեան համար գովեստ գրէ առանց բացատրելու ըստ մեծ սկզբանն Տաճկահայոց գրագիտաց, այսինքն գրել ու գովել, առանց հասկնալու և ըմբռնելու թէ ի՞նչ են գրում և զո՞վ են գովում. և երբ բացատրութիւն պահանջուի քեզ կ'ըսեն — "Ջանըմ ի՞նչ կ'ըսես. էֆէնտին ըսաւ" այսինքն "Հրամայեաց և հաստատեցան": Այս եղանակաւ Պօլսոյ էնտէլիգենտը իւր Սահմանադրութեան գովողը գտաւ գաւառացւոց մէջ. և ինքն ալ սկսաւ նոյն ժամանակուայ թերթերի մէջ գովել իւր Օճանին: Տաճկահայաստանի Հայ ժողովուրդը մի բնաւորութիւն ունի գովել և յափշտակուել երբ կը գովեն իւր հրապարակաւ իրեններն. բայց Ռուսահայերն ո՛չ. այդ պատճառաւ իրաւունք ունին Տաճկահային հո՜հո՜ անելու. զի ժողովուրդը մինչև որ ինքն ալ չ'համոզուի չ'յափշտակուիր:

1862—63 Թուականին երբ Խրիմեան Հայրիկ Ռուսաստան այցելեց, այն ատեն Ռուսահայերը սկսան ճանչնալ, զի իւր խօսած քարոզներէն հասկցան որ կը զառանցէ. (վեստ) Սարգիս Ջալալեանցի մէկ օր պարսաւեց 'ի Թիֆլիզ Քամոէնց եկեղեցիի մէջ, մի քանի օր վերջ (Ջալալեանցի արծաթ դաւազան խօստանալէն. որ յետոյ ալ չ'տուեց երբ Թիֆլիզեց դուրս ելաւ. ասելով թէ եկեղեցիի մէջ կրելու համար տուի և ոչ հետդ տանելու) սկսաւ գովել, յետոյ Վաղարշապատում բեմի վերայէն սկսաւ ասել „Արծիւը այնպիսի բոյներ դըրած է որ հինգ տարի վերջը Սահակ Մեսրովպներ դուրս պիտի գան: (և դեռ գալիս են), և երկինքէն պիտի իջնէ թագ ու դաւազան (բթամատը ցոյց տալով) և այս մատովս պիտի օծեմ Թագաւորին ճակատը„. Ժողովուրդը ծիծաղեց դուրս ելաւ և իւր Վարագայ վանքին ի՞նչ լինելն ալ հասկնալու համար յատկապէս տիար Երուանդունի ընկերացուցին որ գնաց տեսաւ այն ինչ որ Ժան Ժաք Ռուսօին "խոստովանութիւն„ գործոյն մէջ վանքի մասին կը խօսի և ալ աւելին: Եւ Խրիմեան այնչափ Աստուածավախութիւն և առաքինութիւն ունեցաւ որ Մամիկոնեանի (այժմ 'ի Նովոռոսկի լուսանկար) ձեռամբ թունաւորել ջանաց զՏիար Երուանդունիի որ հաստատուեցաւ Շարան և Մարտիրոս պէյերուն Իգնատիոս վարդապետի գիտութեամբ. որ երբ սկսաւ հրապարակել վանքի գաղտնիքներն: Եւ նաև իւր սիրեցեալ աշակերտ Սանտենց Օհաննէսի (*) որ Էծուկենց Մկրտիչին հրահանգներ կը տանէր իւր վարդապետին կողմանէ: Այս ամեն անցքերը Ռուսահայերը խիստ լաւ գիտեցան և հասկցան. բայց որո՞ւ ի՞նչ ասեն. զի մերն է յանձանքը որ լաւ կղերներ չ'ունենք: Այդ թուականներին Վարագայ վանքի պատմութիւնը Թիֆլիզ պիտի հրատարակուէր Էնֆիէճեանց, Աղաբէկեանց և նաև Գէորգ աղա Արծրունի հայրենակցութեան սիրոյ համար արգիլեցին, և այս արգելքն ծանօթ է Տիարց Պերճ Պռօշեանցի, Ղ. Աղաեանցի, Սիմոնեանցի և Վէլթէրանի և նաև Պօլսոյ նոյն ժամանակուայ երեսփոխանաց և այլոց են ևն:

Վանայ Պօղոսեան և Ապօղոսեան ազգամիաս կուսակցութեանց հեղինակն և հիմնադիրն, դարձեալ նոյն ինքն Մկրտիչ Խրիմեանն է. որոյ մանրամասնութիւնք ինչպէս նաև իւր կեանքի պատմութիւն այնքան երկար է որ հատորներ կը հարկաւորի .մենք դրանք այժմ մոռանալով կը ցաւինք ըսել թէ, այս ամենի յանձանքը՝ Պօլսոյ էնտէլիգէնդին է, որ վարժ է իրենց կեղևէն դատելու և ո՛չ հետևութենէն, այս պատճառաւ միշտ առանց հասկնալու գրեցին, տարածեցին, գովեցին, և ժողովրդեան խաբելով Հայրիկ անուանը հանուցին, մինչդեռ այդ Հայրիկը ո՛չ մի օր առ ազգն, ո՛չ հօր գուրգուրանքըն և սէրն ունեցաւ. այլ միշտ ծախեց ազգն ալ ազգասիրութիւնն ալ, 'ի Թիֆլիզ իրեն այցելողներուն ետևէն կ'ըսէր "ասանք ալ ազգային ճենճերով կը ճենճերին„: Բաց աստի երբ Թանզիմաթը հաստատուեցաւ մի քանի լուրջ Հայեր գնացին աղաչելով խորհուրդ տուին Համչէն գնալ կէս Թըրքացեալ Հայերն 'ի դարձ բերելու, բայց մեր մեծ ազգասէր Խրիմեան կոչեցեալ Հայրիկն. բարեհաճեցաւ յայտնել այդ խորհուրդը Թուրք կառավարութեան. որպէսզի իւր ճանապարհորդութիւնը արգիլուի. բայց ինքը այս օրինակ գործերը ծածկելու լաւ վարպետ է, որովհետև ժողովրդեան թոյլ կողմերը ձեռք առնել խիստ լաւ գիտէ. աղքատի տակ տալ. գաղտնի թասով իւղ խմել. սեղանին վրայ մածուն և կամ ձիթապտուղ բաց դնել, 'ի ցոյց մարդկան վերարկուն աղքատի տալ. անդին ալ տովէլոց մամաժողովի գումարները երբեմն "Ասիա„ հրատարակող լրագրապետի մը հետ աղալ, որ երբ բացատրութիւն պահանջուեցաւ "Չէք գիտեր. ես ապուշ եմ, եղբօրս տղաքը քովս կ'երթային կուգային առեր են„ ըսելով ճերմակ երես դուրս գալ: Ասոնցմէ զատ արդեօք

(*) Սրուանձտեանց:

կը յիշէ Խրիմեան սրբազան 1885ին Վանայ մէջ ապշութեամբ շնորհակալութեան հեռագիր ստորագրելն որ 61րդ յօդուածի ջնջում պահանջել էր, 1890ին ալ մի քանի հոսհոս ունճիներու հաճելի դառնալու համար Հայլին գողգոթան Թողլով Հրէից գողգոթան ապաստանիլն. վերջապէս որ մէկ ազգասիրութիւններն պատմենք որ կարենանք համոզել թէ ահա՛ մի մարդ որ կեանքումը ինքնաբերաբար մի մեծ գործ չէ կատարած, այլ միշտ Թելադրութեամբ։ Ա՞րդ նըրանից ինչ կարելի է սպասել և երբ այդ թելադրութիւնք պակասել են իրեն համար իւր անքաղաքագիտութիւնը և ապշութիւնը յերեւան եկած են. և այդ ապշութիւնք այնքան յաճախակի կրկնուել են որ Պօլսոյ Պատրիարքարանի ատենագրութեանց մէջ «Ապուշ» բառը Մկրտիչ Խրիմեան է նշանակում. և ինքն իսկ բիւրաւոր անգամներհրապարակաւ և առանձնակի ասեր է երբ մի Թերութիւն դիտել տըրուած է իրեն. «չէք գիտեր որ ես ապուշ եմ»։

Ահա՛ ժողովուրդ քեզ մի զառամեալ մարդ. որ բացի Հայերէնից օտար լեզու չէ իմանում, և դարձեալ մի մարդ որ ոչինչ չէ հասկանում կրթութիւնից և քաղաքագիտութիւնից։ Ուստի եթէ սրան մէջ ներկայ մեր տագնապալից պարագայում յարմարութիւն և արժանաւորութիւն կը նկատէք կաթողիկոսացուցէք «արիւն ձեր 'ի գլուխ ձեր»։

Խնդրում ենք միանգամայն այն տիրացուներից կամ յիշեալի գրպանէն փող և լաբլաբու գողացող վարժապետներից որ չ'համարձակլին դրան ջատագովելու ջանքերու նկրտիլ. որպէս զի անգամ մ'ալ չը պարտաւորինք վկայներով և փաստերով հանգուցեալ Տիար Ստեփան Փափազեանի քունը վրդովել և նրան ալ գերեզմանի միջից ծափահարել տալ։

* * *

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆ.

Զափազանցութիւն չը լինիր եթէ ասենք թէ՝ շատ քիչ գործերի մէջ, կը համարձակիմ ասել գրեթէ բնաւ իրականութիւն ունի այս մեծ տարր մեր մէջ, անտանելի մի պառակտում, բարոյական ախտերի դասակարգէն նշանաւոր մի ներկայացուցիչն կարծես մեր կազմային դրութեան ոգին կը կազմէ. հարիւրաւոր տարիներէ 'ի վեր 'ի մեզ պատկերուած նախանձ, ոխ, ցասում դեռ կը տիրեն Հայերի վրայ անարգել. մենք չենք սիրեր յառաջդիմութիւնն զի չենք ուզեր — շատ յարգելի բացառութիւնով — իրարու յառաջդիմելն տեսնել. կ'անարգենք այն ճակատ որ բեղուն գաղափարների կայան կ'սկսի դառնալ, կ'անիծենք այն ծնունդ որ մեր կեանքի վրայ կը մտածէ վրայ տալով կեանք եւ դրամ, Ամերիկայի վայրենիներին պէս փախուստ կուտանք յառաջադիմութենէն, լաւագոյն կը համարինք խաւարն լոյսէն եւ մեռեալ վիճակի մէջ ապրիլ Աստուածային օրէն կ'ըմբռնենք, մեր այս անկենդան կացութիւնի պատճառաւ համերաշխութիւնի պակասութիւն կը նշանակէ եւ ուր համերաշխութիւն չ'կայ հոն կը պակսի ոգեւորութիւն. ենթադրենք մի պարզ բնակարան ուր կ'ապրի մի հայր իւր պարագայով, երբ սէրն փոխադարձ, համերաշխութիւնն նոյնութիւնով չ'թագաւորէ ի՞նչ կը հետեւի. կը փլատակի այն, աւելի ընդարձակենք մեր խօսք երբ չորս միլիոնէ աւելի մի ազգի մէջ չ'տիրեց ընդհանուր առումով ի՞նչ կը հետեւի դմա, անկում, մահ, ոչնչութիւն։ Առանց համերաշխութեան յառաջադէմ ընթացք անկարելի կը լինի յուսալ, մի ազգ առանց աղոր կը գլտորի գահաւիժէ գահաւէժ եւ վերջապէս մը կործանի։

Անհամերաշխ ընթացք մի գհետ պնդելով ի՞նչ օգուտ կրնանք ակնկալել, այլ ողբալի է նկատել որ տխուր իրականութիւնն, անհամերաշխութիւնն է 'ի մեզ տիրող մարմինն, այսօր չորս հոգի մէկ կուգան կը կազմեն մի բարենպատակ ընկերութիւն. մատենադարան մի հաստատել, դպրոց մի վարել, աղքատ Թշուառների սատարել է իրենց նպատակ, մի վայրկեան յետոյ տեսնես կը պառակտին զայն կազմակերպողք, եւ այս երեւոյթ է ընդհանուր. ո՞վ է պատճառը ո՞վ է յանցաւորն, ընդհանրապէս հիմնադիրն, որ միշտ 'ի մեզ անմարսելի մի մարդ կը դառնայ. առանցնաշնորհել կ'ուզեն իրեն համար ամեն ինչ եւ այսպիսով առիթ կուտայ գայթակղութեան եւ այսպիսով նա որ պատճառ եղած է մի բարենպատակ ընկերութիւնի կազմակերպութեան եւ դարձեալ նա պատճառ կը լինի լուծուելուն, եւ այս մտածել կուտայ թէ ուղղութիւն չ'կայ, լաւ խորհիլ չ'կայ, եսութիւն կայ ծայր ատիճանի, ամեն ոք իւր ասած երկնային պատգամ կ'ըմբռնէ, ամեն ոք իւր առաջարկ Մովսէսի պատուիրանքներին կը նմանցընէ եւ հետեւաբար անվիճելի ճշմարտութիւն կը խոստովանի. եթէ մարդ սատկաչունջ ձմռէն գարնան եւ ամառուան ախորժահամ միրգերը կրնայ յուսալ, այն ժամանակ ալ այս քայքայիչ տարրերի ամբոխն ներկայացնող մի կազմակերպութենէ շահ կրնայ ակնկալել։

Դաստիարակութիւնի պակասութիւնն ալ ոչ նուազ մեծ դեր կը կատարէ ազգի մի մէջ ուր կը պակսի ներդաշնակութիւնն իւր ամեն մանրամասնութիւնով. դա մէկ ցաւը հարիւրի կը բարձրացնէ եւ հարիւրը տասն հազարի. դեռ մենք օրինաւոր կամ ասենք պարզապէս չափաւոր կ'ընդունինք այն ապօրինի եւ կիսկատար կրթութիւնն զոր կուտանք մեր զաւակներին 'ի Պօլիս՝ հայութեան կեդրոնին մէջ եւ 'ի գաղթականութիւնս ուր համեմատաբար շատերի կողմէն ազգային արժանապատուութիւնի գանձեր կը սպառուի։ Կ.Պօլսէ առնուած լուրերի նայելով կեդրոնական վարժարանի աշակերտներ սկսած են թողուլ զայն եւ ընել անդրէն օտար վարժատուններն. չեն կրցած վարուիլ եւ հետեւաբար մտածել կուտայ մեզ. պակսած է նոցա մէջ համերաշխական ոգին որով լաւագոյն համարած են ձգել Հայ դպրոցը. իսկ աստ, մի պատանի զգաց թէ պէտք ունի իւր ուսումը լրացնելու կը դիմէ մի [illegible] կը դիմէ օտար վարժարան եւ հոն կը թաղուի օտարութեան մէջ. նա այլեւս կը մոռնայ իր

լեզուն. իր եկեղեցին եւ կրօնքը, կը մոռնայ իր եղբայրը եւ պարոնը խորթ կը հնչէ իր ականջին, մէօսիէօ ահա իր սիրուն բառը. տիկինն Եւայի երեւցող օձը կը նկատէ եւ մատամ կ'արտասանէ. հայերէնն բաղադրեալ է կ'ըսէ ֆրանսական բարբառը կ'ընդգրկէ։

Այո՛ դաստիարակութիւնի, ճշմարիտ դաստիարակութեան պակասութիւն կը նշանակեն առքա. համերաշխական զգացումների զգայութիւն առել է այդ։

Վա՜յ այն մարդուն որ չ'գիտէ ներգաշնակութիւնի համը։

Գ. Շ.

Կ.ՊՈԼԻՍ 23 ՆՈՅ. 91

Ամպոտ երկինք, ամպոտ սրտեր, ահա այս է 'ի Պոլիս տիրող կացութիւնն, վիշտեր պատած են մեր չուրջ ցաւեր յար կը կեղեքեն զմեզ. Ազգային վարչական մարմնոց դժուարին եւ ողբալի կացութիւն բացատրութեան չ'կարօտիր. ի՞նչ կ'անէ Երեսփոխանական ժողովը եւ ի՞նչ անելու մտադրութիւն ունի, ոչ ոք գիտէ այդ. ի՞նչ կ'անէ Աշըքեան Պատրիարք այդ մեծ ժողովին նախագահը. — ոչինչ, եւ ի՞նչ կրնայ հետեւիլ այս անորոշ կացութեան եթէ ոչ չփոթութիւն, եւ 'ի վեր քան զամենայն ի՞նչ կ'անէ Պոլսոյ Հայ մամուլն այսքան բազմադիմի անորոշութեանց առաջ, ունի՞ կը կարծէք արդեօք բաւական բարոյական ոյժ մաքառելու համար տիրող անտանելի մահացու վիճակին դէմ. նա չեմ գիտեր ինչ արտասովոր մտածումներով տոգորուած իւր միակ փառք իւր անդամոց դէմ սուր սլաքներ արձակելու մէջ կը փնտռէ. Հայրենիք, Մանզումէ, Փունջ. միմեանց կը խառնեն զերկին զերկիր գայթակղութիւն ցանելով ժողովուրդի սրտին մէջ։

Կաթողիկոսական խնդիր մի ունինք այսօր որ ամեն խնդրէ առաւել պէտք է զբաղեցնէ մամուլն եւ ժողովուրդը եւ ի՞նչ կ'անէ մամուլն Հայութեան տիեզերական ընդհանուր աղաղակի առաջ. ի՞նչ պատասխան կուտայ ժողովուրդի հարցման երբ նա միաբերան կը գոչէ. «Ո՞վ պիտի բազմի Լուսաւորչայ գահուն վրայ» հակառակ իր բացատրութեանց, փոխան Ազգին մէջ լուսաւորեալ գաղափարներ սփռելու դատարկ վիճաբանութեանց մատնուած, կը մաքրէ անձնական հաշիւներ միայն, որպէս կ'անդրադառնայ ժողովուրդի հարցումն, «ո՞վ պիտի բազմի։»

Ժողովուրդի այս հարցում նպատակ չ'ունի տեսնել ստեղծագործումն կուսակցութեանց, ամեն բանէ առաջ Հայութիւնն առաջին չարժիչ զօրութիւն մի կը ներկայանայ որպիսի մեծ խնդրոյ մի մէջ, որոյ երկրորդ կարգը կը գրաւէ, մամուլն, անաչառ մամուլն։

Նուազ գայթակղական չէ տեսնել 'ի Թուրքիա 'ի Թիֆլիս կամ յԵւրոպա լրագրական ներկայացուցիչներէն ոմանց բռնած ընթացք, որոնք կը ջանան 'ի լոյս բերել աղետաբեր կուսակցութիւններ տալով երեւակայութենէ բղխած բացայայտ ընտրելիներ. եւ կարելի կը լինի՞ մտածել որ Հայը այլ առաջարկեալներու առաջ պիտի խոնարհեցնէ իւր ճակատ, բնա՛ւ. մենք չենք կարող համոզում գոյացնել առ այդ, ժողովուրդը այդ մեծ դատաւորն բաւական չ'կրնար համարել ախերով վախերով զեղուն մի անձնաւորութիւն, որ պիտի գայ պաշտպանել իր եկեղեցական իրաւունքներ բացարձակ արդարամտութեամբ. տասնեւիններորդ դարը սարսափի դար է. մի փոքր անզգուշութիւն Ազգի մի կեանքն կրնայ մեծ վտանգի տակ թողուլ. մի անկարող մարդ, կրնայ հայը հոգեվար անել, ահաւոր ճգնաժամի մէջ ենք արդէն, յապահովի չէ մեր լեզուն ու եկեղեցին, Ռուսաստանէ եկած լուրեր, ապացոյց են սմա. Էջմիածնայ Մայր Աթոռին վրայ թշնամի աչեր յառած են. Ռուսիայի առաջին եւ վերջին նպատակն է չնորհքի հարուած մի տալ նմա։ Հռոմ Եւրոպայի խորերէն Հայաստանեայց եկեղեցւոյն Արարատի կողերուն վրայ ուղղած իր ակնարկներ իւր մրոտած թուղթերն սփռել կը ջանայ անդադար Հայութեան մէջ. ամենքս ալ կը խոստովանինք թէ որքանի անկարեւոր այս վերջին ոսոխ այնքան ահարկու է առաջինէն։

Այս ցաւալի վիճակներու առաջ, կը զգացուի պէտքն մի գործնական անհատի, ժողովուրդի ցաւերն հասկացող մի ճշմարիտ հօր. Հայ Կաթողիկոսն ամենէն առաջ պէտք է իր եկեղեցւոյն ծառայն լինի, պարտի միացնել յինքեան խստապահանջութիւն, ազդեցիկութիւն եւ հեռատեսութիւն. իւր միակ ջանք ժողովուրդի վէրքերուն սպեղանիներ քսել լինիլու է. ամենածանր պիտի լինի այսպէս իւր պաշտօն. պիտի պարտաւորի գուշակել նա Հայութեան սպառնացող փոթորիկներ եւ պիտի կանգնի նոցա դէմ ինչպէս Հոլանդայի թումբեր Հիւսիսոյ ծովին դէմ, պիտի ջախջախէ նա նոցա խստութիւններ եւ այսպէս պիտի չողացնէ Ազգին վրայ յուսոյ կարմիր արշալոյսն, իրեն հակառակ այս տարրերու ներկայանայ նա իբրեւ մի սովական միամիտ եւ բարի մարդ, Հայաստանի վիճակ բոլորովին կը դառնանայ. նոքա որ Հայրապէտի վրայ միամտութիւն եւ բարեսրտութիւն բաւական կը նկատեն նոքա չեն մտածեր ազգին օգուտը։

Այո՛, գործնական մարդու պէտք ունինք այլ ոչ կեղծաւորի, երեսպաշտի, գրեթէ վեց ամիս մնացած է այն օրուան յորում պիտի ընտրուի ամենայն Հայոց Էջմիածնայ Հայրապետն. ընտրութեան պատրաստութիւնք ըսկսուած են տեսնել եւ մեզ կը մնայ վեցամսեայ մի յոյժ լոյն գործունէութիւն.

Ժամանակէ մի վեր Կաթողիկոսական Տեղապահի վրայ ծանր լուրեր կը շրջին, Երեմիա եւ Սեդրակեան կապուած են կը թուի Հաւատաքննիչներու մի ժողով. մանաւանդ առաջինն մոռցած կերեւի նոյնութեամբ իւր պաշտօն որ այնքան պատուաբեր է եւ զոր մրոտել կը ճգնի նա ինքն. է՞ր աքսորուեցան Ներսէս եւ Սուքիաս Եպիսկոպոսներն. կարելի՞ է անդասել այս ծանր պարագայն եւ հասած նոր տեղեկութեան մի համեմատ ո՞վ էր թունաւորել տուողն Ներսէս եպիսկոպոսն Խրիմի ճամբուն վրայ. Տեղապահը այդ անսիրտ մարդը մոռցած է Ազգն ու եկեղեցին եւ աչերն յառած է Մայր-Աթոռին վրայ. մենք անկարելի կը դատենք նրա Կաթողիկոսացում, միեւնոյն ժամանակ բաւական ալ վտանգաւոր նրա Տեղապահութենէ եւս յետս կոչում Կաթողիկոսի

ընտրութենէ ետք, չատ ալ կը վախենք որ բոլորովին տարբեր ձեւերու տակ երկրորդ Մուրատեանմի դառնայ, ողբալի է մեր այս կացութիւն այլ ոչ յուսահատական, պէտք է ամփոփուինք 92 Մայիսին համար, ժողուենք մեր ոյժեր չ'տալու համար մեր սանձ անկարեւորներու ձեռք. այս է մեր Հայոցս առաջին եւ վերջին պարտք այս կետին մէջ։

Ա.

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ «ԴԱՆՈՒԲ»Ի ՆԿԱՏՄԱՄԲ

— *Բարի լոյս պարոն Կակոս «ԴԱՆՈՒԲ»ը կարդացի՞ք։*

— *Այո՛։*

— *Ինչպէ՞ս գտաք. ի՞նչ համոզում ունիք իր նկատմամբ։*

— *Բան մը չէ. Դանուբը չի սառած ան կը սառի։*

— *Արդարեւ ձեզի պէս ժէլէզնոդեոնէր փչելու ըլլայ կը սառի. բայց ես կը յուսամ որ տաք հովերն ձեզմէ աւելի ազդեցիկ ըլլան։*

*
* *

— *Բարեւ տիկին. է «ԴԱՆՈՒԲ» բնտացաք։*

— *Աման այդ ալ լրագիր է. ալ բան չէ գտեր կնիկները ծառին կախելու ելեր է։*

— *Դուք հոդ մի՛ ընէք. նա միայն տհաս կիները ծառէն կը կախէ, իսկ ձեզի նմանները հրացանի կը բռնէ։*

*
* *

— *Բարեւ Բառնաբաս աղա «ԴԱՆՈՒԲ»ը տեսա՞ք։*

— *Իրաւ որ 6—7 ամիս է Հայոց թաղէն գուրս ելած չեմ։*

— *Զէ. եղբայր. «ԴԱՆՈՒԲ» լրագիրը կարդացի՞ք։*

— *Վա՛յ, Դանուբ անունով լրագիր ելեր է. չի տեսայ. բայց ինչ կայ գրուելիք որ գրէ… ատա՞մ ինչուս պէտք է, ինչ կ'ուզէ նէ թող գրէ. իմ կոյիս չի զպչի տէ։*

— *Կարծեմ թէ պիտի գրէ ու հարուածէ օղին, գինին եւ նրանց սիրահարները։*

— *Է. այն ատեն Պուլկարիոյ մէջ ընթերցող չի գտներ. ժամանակին գիտէք ինչո՞ւ «ՕՐԱԳԻՐ»ը Պօլիս կը ծախուէր որովհետեւ խմբագիրը գինին կը գովէր օղին կը պաշտէր։*

ՄՈՒՐՃ

ՄԱՆՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Առ Տ. Օ. Ֆ. Կ.Պօլիս. Ձեր նամակի պարունակութիւնը մեր ծրագրին հակառակ լինելուն չեմք կարող հրատարակել։

Առ Տ. Հ. Օտէսա. Ձեր երկու նամակներուն մին ստացայ 20 Նոյեմբերի թիւը։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՐԱՖՖԻ, **ԽԵՆԹԸ** (*Արկածներ վերջին Ռուս-Թուրքական պատերազմից*) եւ **ՋԱԼԱԼԷԴԴԻՆ** (*Մի պատկեր նրա արշաւանքից*). *երկուքը մէկտեղ մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ. Տիպ։* 8 *ֆր.* 50 *սանթիմ*

ՐԱՖՖԻ, **ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ** *Անգրկովկասեան պատմական վէպ.* 5 *ֆր.* 50 *սանթիմ։*

ՐԱՖՖԻ, **ԿԱՅԾԻՆ ԿՏԱԿԸ** 5 *ֆր.* 50 *սանթիմ։*

ՐԱՖՖԻ, **ՄԻՆԸ ԱՅՍՊԷՍ, ՄԻՒՍԸ ԱՅՆՊԷՍ** *Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից։*

ՐԱՖՖԻ, **ԿԱՅԾԵՐԻ ՎԵՐՋԸ** 1 *ֆր.* 50 *սանթիմ.*

ՐԱՖՖԻԻ *Պատկերը խոշորադիրը.* 2 *ֆր։*

» » *աւելի փոքրը.* 1 *ֆր։*

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ. ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ *Որուն մէջ կը պարունակէ տասնեւմէկ ազգային վիպասանութիւններ. Գինն է* 5 *ֆր.* 50 *ս.*

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՈՐԲԵՐԸ?

ԱԶԴ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

«ԴԱՆՈՒԲ» ԼՐԱԳՐՈՅ
'Ի ՌՈՒՍՃՈՒԿ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ՝ տպարանիս մէջ կը տպագրուին Հայերէն, Պուլկարերէն եւ Ֆռանսերէն լեզուներով ամեն տեսակ գործեր, ինչպէս են, գրեանք, վաճառականական տետրակներ, շրջաբերական, առեւտրական ցուցակներ. այցետոմսեր. ընկալագրեր, հարսանեաց հրաւիրագրեր, մահագոյժի ազդեր եւն եւն. յաճախորդք կը հրաւիրուին դիմել խմբագրութեանս հասցէին։

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԷՖ

ՌՈՒՍՃՈՒԿ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԷՖԻ

Руссе. Печатница В. „Тануп“